

ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՔ

ԶԻՆՈՒՅՐ

Ճակատը խօնարհ, գրօշակ մի ձեռին
Գնում է արագ, զիւցազն պատանին.
Դրօշակին վըրայ, հին պատառուած՝
Որոշ երեխն այս տառեր գըրուած՝

Հայրենիք:

Դեռ այսիդ վըրայ կաթիլք արտասուաց,
Փայլէին մի տխուր փայլով սիրաթաց.
Զի բաժնուեր էր նրանցից՝ որ սիրէր,
Եւ լոկ այս բառովս միայն սփոփուէր,

Հայրենիք:

Հանդիպում էր նա խոնջեալ ճամբորդին,
Որ հանգէր խաղաղ, ցուպն 'ի մէջ ոտին.
Հրաւիրէր քաշին իւրայ հանդըստեսն,
Բայց նա յառաջ զնայ տալով պատասխան,

Հայրենիք:

Որսորդն ասէր, որ ըզզոյլ լինի
Թէ առամմաձե ծայր, լեռներ անցնի,
Ուր մահ գահավէժ տայ՝ մի քայլ մոլոր.
Բայց նա մրմնէր շրթներով բոսոր,

Հայրենիք:

Քաջ մարտիկն որախ՝ եւ հոգւով վըսեմ,
Խաղայր ժըպտերես, մահու վլոտնգի գէմ.
Ոչ լեռ, ոչ անձու, ոչ գաշտ, ոչ անտառ,
Չէին խոշընդու. մնէր յառաջ գնայր.

Հայրենիք:

Նա հանդիպեցաւ կուսին նազենի,
Որի տասնեւոթ գարունք ծաղկենի,
Սիրայ բոյրերով զարդարել էին.
Լըսեց որ քաջըն ասէր կաթոգին՝

Հայրենիք:

« Ո՞հ ցընորք, գոյեց լեռների հարսը.
« Հայրենիք անցուշտ տայ քեզ օրհասը.
« Եկ իմ գըրկի մէջ վայլել սէր եւ կեանք ».
Բայց նա իւր սրտին զըրած էր փականք,

Հայրենիք:

Արեն երբ նորից երկինքը կապտեց,

Դաշտերն եւ լեռինք մառախուղ ծածկեց .
Յանկարծ մարտագոռ , ճիշեր եւ աղմուկ
Խափանեցին ձայնն , որ հնչէր 'ի սուգ .

Հայրենիք :

Բայց միդահալած քամին սուրալով'
Պարզեց զիականց կոյտերն 'ի հոլով .
Երեւցաւ դաշտում քաջն էջ վիրազարդ ,
Որ դեռ մրմթջէր մեռելոց 'ի բարդ ,

Հայրենիք :

Մեռաւ , աչքերը երկնքին ուղղած ,
Կեանքին իւր Հայրենեաց , հոգին առ Աստուած .
Դրօշակըն ծածկեց իւր դրօշակակիր ,
Յորում՝ կար գրուած իր տապահուգիր .

Հայրենիք :

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

Ի ՄԱՀ ՔՐՈԶՍ ՍՐԲՈՒՃԻՈՑ ԵՒԳԻՒՆԵԱՅ

Այս առաջին գիշերն է , Քոյր սիրական ,
Որ պի՛ նընջես գերեղմանիդ սկ մուխ ծոց .
Ճերմակ հագուած , հանգերձ մաքուր կուսական ,

Զոր կարեց մայրդ , աչքը արցունք , սիրաը խոց .
Պիահ նընջես այդ նըսեմ տեղն , առանձին .

Քու շորս բոլորդ , անծանօթ քիշ ժողովուրդ ...
Ուր կը քըչէ խաչքարանց մէջը քամին
Գըգուելով յար ծառ և ծաղիկ և թըփուտ :

Այլ շի հասնիր շունչը հովին մինչ առ քեզ .
Տապանիդ մէջ անհով , անօդ գուն պառկած ...

Բառ է , ելիք , Քոյր իմ՝ քաղցրիկ , նոյէ աես
Շողողուն լոյսը աշագեղ աստեղաց :

Նոյէ , երկինքն ինչպէս անամզ կը փայլի ,
Հեղիկ շարժին լըճիս ջըրիք . հոն հեռան .

Հորիզնէն , սւր մէգ մըշոշն կը պարզի ,

Լոյս կ'երեայ , որ կը մօտի գողգոնուն :

Դա աղօտ լցոս կոնդոլային է յոգնած .

Թերես այն է , որ այս առասու ըզքեզ հոս .

Ճերմակ հագուած բերաւ զանգաղ աւ կամաց

Որ ինսաս , Քոյր , այդ գետնափոր հողուն փոս :

Ու... գու եկար հանգչած յառաջ նաւակին ,

Մաղիկներով և ջահերով զարդարուած ,

Յոյժ գեղեցիկ . ուր ծաղիկներն բուրէին